

Ֆասցելյոզ (ժողովրդական անվանումը՝ քյափանակ)

Հիվանդության բնորոշումը. Ֆասցելյոզը ընտանի և վայրի որոճողների սուր կամ խրոնիկ ընթացքով հիվանդություն է: Հիվանդանում են նաև միասմբակավոր կենդանիները և մարդը:

ՀՀ-ում տարածված է *Fasciola hepatica* (սովորական ֆասցիոլան): Հարուցչի մարմինը տերևաձև է, երկարությունը 2-3 սմ է:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Հարուցչի կենսակերպը. Մակաբույծի ձվերը տավարի կղանքից ընկնում են ջրի մեջ, որոնցից դուրս են գալիս թրթուրներ և մտնում խիտունջի մարմնի մեջ, որտեղ 2-3 ամիս անցնում են նրանց զարգացման փուլերը: Դուրս գալով խիտունջի մարմնից կաչում են ջրի մեջ եղած խոտերին, քարերին կամ լողում ջրի մեջ: Կենդանիները վարակվում են թրթուրներին կերի կամ ջրի հետ կլանելու միջոցով: Վարակվում են հիմնականում արոտային շրջանում, խոնավ և ճահճոտ մարզագետիններում արածելիս: Ֆասցելյոզի թրթուրները պահպանվում են նաև այդ վայրերից հավաքած չոր խոտի մեջ և վարակի աղբյուր են հանդիսանում ձմռանը կերակրելու ժամանակ: Ֆասցելաները տիրոջ օրգանիզմում մակաբուծվում են տարիներով:

Մարդը վարակվում է վարակվաց կենդանու հում կամ վատ եփվաց միսն ուտելով:

Կլինիկական նշանները. Հիմնականում ընթանում է խրոնիկ ձևով, կլինիկական նշանները արտահայտված չեն: Կլինիկական նշանները արտահայտվում են այն դեպքում, երբ կենդանու մոտ վարակվածությունը շատ բարձր է՝ պարազիտները շատ են.

- նկատվում է ընկճվածություն,
- տեսանելի լորձաթաղանթների թույլ դեղին գունավորում,
- մարմնի ստորին հատվածների այտուցներ,
- խանգարվում է մարսողությունը,
- մազերը փշաքաղված են
- նվազում է կենդանիների մթերատվությունը:

Կանխարգելումը. Ներքին պարազիտային հիվանդությունների կանխարգելման արդյունավետ միջոց է կանխարգելիչ պարտադիր ճիճվաթափությունը՝ հատուկ դրա համար նախատեսված դեղորայքի միջոցով:

Հայաստանի պայմաններում կենդանիների կանխարգելիչ ճիճվաթափությունը պետք է կատարել տարեկան երեք անգամ.

- առաջինը՝ ապրիլ-մայիս ամիսներին,
- երկրորդը՝ օգոստոս-սեպտեմբերին,
- երրորդը՝ դեկտեմբեր-հունվարին:

Ճիճվաթափման համար լավ արդյունք է տալիս ալբենդազոլը: